



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

10 մայիսի 2015թ.

N 82 -Ս

ք.Ստեփանակերտ

2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 3-Ի ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

2015 թվականի մայիսի 3-ին կայացած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններն անցկացվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության 77-րդ հոդվածում նախատեսված ժամկետում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 14-րդ հոդվածին համապատասխան՝ քվեարկությունը կազմակերպելու և քվեարկության արդյունքներն ամփոփելու նպատակով Արցախի Հանրապետության տարածքում (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչությունում և Շուշիի քրեակատարողական հիմնարկում) կազմավորվել է թվով 279 ընտրական տեղամաս:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 17-րդ հոդվածով նախատեսված կարգով հանրապետության տարածքում կազմավորվել է 11 ընտրատարածք: Նույն օրենսգրքի 34-րդ հոդվածին համապատասխան՝ գործել է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ կենտրոնական ընտրական հանձնաժողով, տարածքային ընտրական հանձնաժողովներ և տեղամասային ընտրական հանձնաժողովներ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 13-ի N 59-Ս որոշմամբ սահմանվել են այն տարածքային ընտրական հանձնաժողովները, որոնց լիազորություն է վերապահվել մեկից ավելի շրջանների համայնքներ ընդգրկող ընտրատարածքներում կազմակերպել և անցկացնել ընտրություններ: Ազգային ժողովի այս ընտրությունները տարածքներում համակարգել են թվով վեց տարածքային ընտրական հանձնաժողովներ: Ընտրությունների ողջ գործընթացը կազմակերպել և վերահսկել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Հիմք ընդունելով ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

ընտրական օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան, 2015 թվականի մայիսի 6-ին կազմել է արձանագրություն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով 2015 թվականի մայիսի 3-ի ընտրությունների քվեարկության արդյունքների վերաբերյալ:

Համաձայն նշված արձանագրության՝

Քվեարկության օրն ընտրական տեղամասերում կազմված ընտրողների լրացուցիչ ցուցակների ընտրողների թիվը	416 (չորս հարյուր տասնվեց)
Ըստ գտնվելու վայրի ընտրողների լրացուցիչ ցուցակների ընտրողների թիվը	61 (վաթսուներեկ)
Հաշվառում չունեցող ընտրողների լրացուցիչ ցուցակների ընտրողների թիվը	1 (մեկ)
Ոստիկանության ծառայողների լրացուցիչ ցուցակների ընտրողների թիվը	227 (երկու հարյուր քսանյոթ)
Ստացիոնար բուժհաստատության ընտրողների լրացուցիչ ցուցակների ընտրողների թիվը	6 (վեց)
Ընտրողների հիմնական ցուցակների ընտրողների թիվը	101331 (հարյուր մեկ հազար երեք հարյուր երեսունմեկ)
Ընտրողների ընդհանուր թիվը	102042 (հարյուր երկու հազար քառասուներկու)
Քվեարկության մասնակիցների թիվը	72296 (յոթանասուներկու հազար երկու հարյուր ինսունվեց)
ՏՀՀ-ներին հատկացված քվեաթերթիկների թիվը	103699 (հարյուր երեք հազար վեց հարյուր ինսունինը)
ՏՀՀ-ներում մարված քվեաթերթիկների ընդհանուր թիվը	31401 (երեսունմեկ հազար չորս հարյուր մեկ)
Անվավեր քվեաթերթիկների թիվը	3380 (երեք հազար երեք հարյուր ութսուն)
Կուսակցության անվանումը	Կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը
1.«Ազատ հայրենիք» կուսակցություն	32632 (երեսուներկու հազար վեց հարյուր երեսուներկու)
2.«Ազգային վերածնունդ» կուսակցություն	3709 (երեք հազար յոթ հարյուր ինը)
3. Արցախի Ժողովրդավարական Կուսակցություն	13105 (տասներեք հազար հարյուր հինգ)
4.Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցություն	1136 (հազար հարյուր երեսունվեց)
5.«Խաղաղություն և զարգացում» կուսակցություն	591 (հինգ հարյուր ինսունմեկ)
6.«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն	12965 (տասներկու հազար ինը հարյուր վաթսուներեք)
7.«Շարժում-88» կուսակցություն	4778 (չորս հազար յոթ հարյուր յոթանասունյոթ)
Քվեատուփում առկա սահմանված նմուշի քվեաթերթիկների թիվը	72296 (յոթանասուներկու հազար երկու հարյուր ինսունվեց)
Անճշտությունների գումարային չափը	15 (տասնհինգ)

Տարածքային ընտրական հանձնաժողովների համապատասխան որոշումների համաձայն՝ 2015 թվականի մայիսի 3-ի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքներով պատգամավորներ են ընտրվել:

- թիվ 1 ընտրատարածքում՝ Դավիթ Հայկի Մելքունյանը,
- թիվ 2 ընտրատարածքում՝ Արսեն Արամայիսի Առստամյանը,
- թիվ 3 ընտրատարածքում՝ Արզիկ Մարտիրոսի Մխիթարյանը,
- թիվ 4 ընտրատարածքում՝ Վահրամ Ռազմիկի Բալայանը,
- թիվ 5 ընտրատարածքում՝ Վիտալի Միխայիլի Բալասանյանը,
- թիվ 6 ընտրատարածքում՝ Իվան Խոբրենի Ավանեսյանը,
- թիվ 7 ընտրատարածքում՝ Սերգեյ Սյոմիկի Հարությունյանը,
- թիվ 8 ընտրատարածքում՝ Դավիթ Ռուբենի Իշխանյանը,
- թիվ 9 ընտրատարածքում՝ Արթուր Բաբկենի Թովմասյանը,
- թիվ 10 ընտրատարածքում՝ Լեոնիկ Լենտրուշայի Հովհաննիսյանը,
- թիվ 11 ընտրատարածքում՝ Արմո Մարդիի Ծատրյանը:

2015 թվականի մայիսի 3-ին կայացած ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել թվով յոթ գրավոր դիմում-բողոք, որոնք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան քննարկվել և լուծումներ են ստացել:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ օպերատիվ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ ընտրական հանձնաժողովները ձեռնարկում են համապատասխան միջոցներ: Քվեարկության օրը ընտրական հանձնաժողովներն օպերատիվ կարգով արձագանքել են ներկայացված գրավոր և բանավոր բոլոր հաղորդումներին, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

Քվեարկությանը հաջորդող օրը՝ մայիսի 4-ին, Ստեփանակերտի և Քաշաթաղի տարածքային ընտրական հանձնաժողովներ սահմանված կարգով ներկայացվել են վերահաշվարկի երեք դիմումներ, որոնցից մեկը՝ հասցեագրված Քաշաթաղի տարածքային ընտրական հանձնաժողովին, մերժվել է՝ դիմումի բովանդակությունն ըստ էության ներկայացված չլինելու հիմքով: Մեծամասնական ընտրակարգով քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում էին ներկայացրել թիվ 2 ընտրատարածքում առաջադրված Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուներ Միեր Աբրահամյանի և Արթուր Ամիրյանի վստահված անձինք (ընդհանուր թվով 18 դիմում): Ստեփանակերտի տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից թիվ 2 ընտրատարածքի 10 ընտրական տեղամասերում սույն թվականի մայիսի 4-ից մինչև մայիսի 7-ն ընկած ժամանակահատվածում իրականացրած վերահաշվարկի արդյունքում քվեարկության արդյունքները թիվ 2 ընտրատարածքի բոլոր տասը ընտրական տեղամասերում մնացել են անփոփոխ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կազմավորված 279 ընտրական տեղամասերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սուբյեկտների կողմից համամասնական ընտրակարգով ընտրության քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում չի ներկայացվել:

Ընտրական տեղամասերից և ոչ մեկում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ևս չի ներկայացվել:

2015 թվականի մայիսի 3-ի ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առաջին ատյանի դատարան հայցադիմում չի ներկայացվել և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առաջին ատյանի դատարանի վարույթում 2015 թվականի մայիսի 10-ի դրությամբ ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ չքննված գործ առկա չէ:

Տարածքային ընտրական հանձնաժողովներից ստացված՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում կատարված գրառումների վերաբերյալ տվյալների համաձայն՝ կայացած ընտրություններում համապատասխան ընտրատարածքներում կազմավորված մի քանի տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում (Մարտակերտի, Քաշաթաղի շրջաններ) քվեարկության օրը՝ 03.05.2015թ., արձանագրված բացթողում-խախտումներն օպերատիվ կարգով վերացվել են և դրանց վերաբերյալ գնահատականները որևէ ազդեցություն չեն ունեցել քվեարկության արդյունքների վրա:

2015 թվականի մայիսի 8-ի դրությամբ համակարգող բոլոր վեց տարածքային ընտրական հանձնաժողովները կայացրել են համապատասխան որոշումներ, որոնց համաձայն 2015 թվականի մայիսի 3-ին կայացած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների նախապատրաստման և քվեարկության ընթացքում տեղի չեն ունեցել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ամփոփվել են նաև հեռուստառադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից իրականացված վերահսկողության արդյունքները և արձանագրվել է, որ 2015 թվականի մայիսի 3-ի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցություններին վճարովի հիմունքներով տրամադրվող եթերաժամանակի սակագնի սահմանման և անփոփոխության օրենսդրական պահանջների, ինչպես նաև եթերաժամանակի ոչ խտրական տրամադրման խախտումներ չեն արձանագրվել: Կան մի քանի ժամանակային շեղումներ, որոնք, սակայն, ազդեցություն չեն ունեցել ընդհանուր հեռուստառադիոքարոզարշավի որակի վրա:

Վերոգրյալը հիմք ընդունելով և ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 73-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը ***ն ր ո շ ու մ է.***

1. 2015 թվականի մայիսի 3-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման ընթացքում տեղի չեն ունեցել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Լ Ե Ռ Ն Ա Յ Ի Ն Ղ Ա Ր Ա Բ Ա Ղ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ա Կ Ա Ն Ը Ն Տ Ր Ա Կ Ա Ն

Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Վ Ի Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ